մանքների բերումով ծրագրածը, հատկապես կառուցվածքի առումով, լիովին ու լիարժեք իրագործել հնարավոր չի եղել: Պատմագիրքն իբրև կառուցվածքային միավոր, ըստ էության, ավարտվում է «Յաղագս սքանչելեացն Աստուծոյ, որ եղև ի վերայ առն ումեմն, որ ի ժամ մահուան իւրոյ ուրացաւ» վերնագրված ԽԹ գլխով: Հաջորդ՝ «Յաղագս մասնական հրկիզութեան, որ եղև ի Կոստանդնուպօլիս մեծ քաղաքին» Ծ գլխով սկսվում է «Գիրք պատմութեանց»-ի այն մասը, որը Դավրիժեցին ոչ թե գրել է կամ շարադրել որոշակի փաստերի հիմամբ, այլ՝ ուղղակի, անկանոն և երբեմն առանց որևէ հատուկ սկզբունքի արտագրել-ներբերել է տարբեր անձանց կողմից պատմված ու նաև գրավոր իրեն տրամադրված տարաբնույթ ու տարաբովանդակ պատմություններ: Սա հանրահայտ իրողություն է և պարբերաբար արձանագրվել-մատնանշվել է հայագետների կողմից[5], թեպետ արժանացել է տարբեր մեկնաբանությունների: Լեոյի կարծիքով, օրինակ, այդ գլուխները «մուծված են Դավրիժեցու Պատմագրության մեջ օտար մարդկանց ձեռքով»[6]: Իսկ ահա Մաղաքիա Օրմանյանն այդ կապակցությամբ գրում է. «...շարադրեալ պատմութիւնը մինչեւ Լ գլուխին վերջն է, իսկ անկէ ետքը մինչեւ ԾՁ գլուխ եղող մասերը, որք իրարմէ անկախ նիւթեր են, կ'երեւի թէ ***ափեն ափեն գրած պատրաստ ունէր, և ետքէն պատմութեան ծայրը կցեց***» (ընդգծումը մերն է–Ա.Ն.)[7]:

Դավրիժեցու պատմագիրքը բացվում է աղոթքով, որով պատմիչը դիմում է Աստծուն՝ իր սկսած գործը բարեհաջող

---

[5] Տե՛ս, օրինակ, ***Հակոբ Անասյան,*** Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ, հատոր Ա, Երևան, 1959, էջ 1145–1146, ***Գարեգին Զարբհանալյան,*** Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսման ազգային վարժարանաց, Բ. Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 176, ***Առաքել Առաքելյան,*** Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հատոր 2, Երևան, 1964, էջ 452, 552–553, և այլն:

[6] ***Լեո,*** Հայոց պատմություն, հատոր 3, էջ 364:

[7] ***Մաղաքիա Օրմանեան,*** Ազգապատում, հատոր Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2492: